

տիրոս վարդապետին և Յովհաննէս վարդապետին եւ Մարկոս վարդապետին եւ մարմնաւոր ծնողներու... Անոնք որոնք գողնալով այս գիրքը (դուրս) հանեն Շէնֆուշէն, նգովեալ ըլլան ԳձԺԸ (318) հայրապետներէն<sup>7</sup> եւ ԺԲ (12) մարգարէներէն եւ ԺԲ (12) առաքեալներէն եւ ԺԲ (12) աստուածաբան վարդապետներէն, եւ Սուրբ Երրորդութենէն, եւ Քրիստոսի օրհնեալ բերանէն, նաեւ ինձմէ՛ Միմաս վարդապետէս, հոգւով եւ մարմնով կապուին այս եւ գալիք աշխարհին մէջ... ամէն: Գրուեցաւ Հայոց ՌձԽԶ (1697) քրտականին Յունիս Ժ (10)ին, իմ՝ Միմաս վարդապետիս ձեռնով, Ս. Էջմիածնի մէջ, Տէր Նահապետի կաթողիկոսութան ժամանակ» (Թորոս Աղբար, Բ. էջ 485-486, թ. 43, Մեկնութիւն Սորճրդոյ Պատարազի ի Ներսիսէ Լամբրոնացոյ):

Ի՛նչ ա՛նաւոր անէճճ՝ չնքուչցիական արժէքի մը գողացողին եւ սրպիսի՛ անձնանուէր գոհարեութիւն ու գորովալի սէր Չնքուչին ու չնքուչցիներուն...

Հիմա, որ մօրթոսուած է հայ Չնֆուշը եւ յաւէտ կորած անոր մատենագրական արժէքները, մարդ կը տարուի մտածելու, թէ երանի՛ Ամթեցին այնքան շա՛տ չսիրէր Չնքուշը, թո՛յլ տար որ մնար Լամբրոնացու այդ գլուխ-գործոց մատենար էջմիածնի մէջ, այսօր դուցէ այն եւս (ինչպէս 1586ին Չնքուչի մէջ զբրուած Չնքուչցի Գասպար զբշի Շարակնոցը) ազատուած կ'ըլլար փճացումէ ու կը պահպանուէր Երեւանի Մաշտոցի անուան Մատենագրանին մէջ ու, աւելին, Չնֆուշապատումին համար սպահովուած կ'ըլլար՝ Չնքուչցի վանուոց վարդապետարան-զպրոցի հիմնադիր Մեծն Մարտիրոս Չնքուչցիի («որոյ գոն ծրեալ մա-

տանց նորին յոյով գրեանք ի սուրբ վանքս եւ եկեղեցին որ ի Շէնֆուշ» - Թ. Ա. Բ. էջ 458) մէկ ձեռագիր գործը: Ի զէպ, Մեծն Մարտիրոս իր օրինակած զբքին սփանչելի յիշատակարան մ'ալ կցած է, որը պիտի երեւի Չնֆուշապատումին մէջ:

\* \* \*

Լուսարանութեան կարօտ կէտ մը եւս: Մինաս Ամթեցի՛ Եպիսկոպոս օծուած ըլլալով Թոխատի վրայ, անոր առաջնորդութեան ութ տարիներուն (1666-74) Թոխատի մէջ իրեն աշակերտած ծանօթ զբիշներ՝ Միքայէլ Թոխատցին եւ Մկրտիչ (կամ Մկրտում) Ջուղայեցին, իրենց բազմաթիւ յիշատակարաններուն մէջ (1678-1696) զայն կոչած են «արիեպիսկոպոս Եղովկիակեբտի» եւ «արիեպիսկոպոս Եղովկիա քաղաքի»: Որպէս զի սխալ մեկնութիւն չարուի այս երեւոյթին, չեչտենք, թէ այդ տիպոսները բովանդակող յիշատակարանները զբուած տարիներուն՝ Ամթեցին Թոխատի առաջնորդ կցած չէ, այլ Թոխատի մէջ իրեն աշակերտած այդ զբիշները անոր տուած են այդ տիպոսները՝ Թոխատի վրայ ձեռնադրուած ըլլալուն համար - սովորութիւն մը, որ Ե. զարէն սկսեալ գոյութիւն ունեցած է Հայոց մէջ եւ ներկայիս ալ առկայ է բոլոր քաղաքակիրթ երկիրներուն մէջ:

(Վերջ)

ԳԱՌՆԻԿ ԳԷՈՐԳԵԱՆ

7. Կ'ակնարկէ 325 թուականին Կոստանդիանոսի հրուէրով Նիկիոյ մէջ գումարուած Տիեզերական ժողովին, որուն 318 հայրապետներուն մէջ էր նաեւ Հայոց Արիստակէս Հայրապետը, Գրեգոր Լուսաւորչի որդին: